Լրամշակված տարբերակ
Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-976-15.09.2010-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է արտոնագրային վճարի հաշվարկման և վճարման հետ կապված հարաբերությունները, սահմանում է վճարողների շրջանակը, արտոնագրային վճարի չափը և վճարման կարգը:

Հոդված 2. Արտոնագրային վճարի հասկացությունը

1. Արտոնագրային վճարը սույն օրենքով սահմանված չափերով և ժամկետներում սույն օրենքով նախատեսված գործունեություն իրականացնող ֆիզիկական անձի (այդ թվում՝ անհատ ձեռնարկատիրոջ) համար եկամտահարկին և (կամ) ավելացված արժեքի հարկին (այսուհետ՝ ԱԱՀ) փոխարինող պետական բյուջե մուծվող պարտադիր և անհատույց վճար է:

2. Արտոնագրային վճարի գումարի մեջ ԱԱՀ-ի հաշվարկային մեծությունն ընդունվում է 60 տոկոսի չափով:

Հոդված 3. Հարկային արտոնությունների կասեցումը

Արտոնագրային վճար վճարողների համար սույն օրենքով կարգավորվող հարաբերությունների մասով կասեցվում են եկամտահարկի և ԱԱՀ-ի գծով հարկային օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնությունները, ինչպես նաև հարկվող եկամուտը որոշելիս հաշվի չեն առնվում համախառն եկամտից նվազեցումները:

Հոդված 4. Արտոնագրային վճար վճարողները

1. Հայաստանի Հանրապետությունում արտոնագրային վճար վճարող են համարվում իրենց հաշվառման (բնակության, գործունեության իրականացման)

վայրի հարկային մարմիններին սույն օրենքով սահմանված ժամկետներում ու կարգով դիմում-հայտարարություն ներկայացրած և սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված պայմանները բավարարող՝

1) բացառապես սույն օրենքի անբաժանելի մաս համարվող հավելված N1-ում ընդգրկված գործունեության տեսակներ իրականացնող անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք.

2) բացառապես սույն օրենքի անբաժանելի մաս համարվող հավելվածներ N1-ում և N2-ում ընդգրկված գործունեության տեսակներ իրականացնող անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձինք:

2. Արտոնագրային վճար վճարող կարող են համարվել այն ֆիզիկական անձինք, որոնց կողմից նախորդ տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների (բացառությամբ՝ որպես վարձու աշխատող կատարած աշխատանքների), ինչպես նաև վարձավճարների իրացման շրջանառության ընդհանուր գումարը (առանց ԱԱՀ-ի) չի գերազանցել 6,0 մլն. դրամը:

3. Արտոնագրային վճար վճարողներ չեն կարող համարվել այն ֆիզիկական անձինք՝

1) որոնք իրենց գործունեության իրականացման համար օգտագործում են անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այլ ֆիզիկական անձանց աշխատանքը, կամ՝

2) որոնք արտոնագրային վճար վճարող համարվելու համար հարկային տեսչություն դիմում-հայտարարություն ներկայացնելու օրվան նախորդ և (կամ) ընթացիկ տարվա որևէ պահին իրականացրել են Հայաստանի Հանրապետություն «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծում, կամ՝

3) որոնք առևտրական գործունեություն են իրականացնում խանութում, Երևանում՝ 7 քառակուսի մետր, այլ վայրերում՝ 10 քառակուսի մետր առևտրական տարածքը գերազանցող կրպակում (տաղավարում), կամ՝

4) որոնք հանդիսանում են համատեղ գործունեության պայմանագրի (բացառությամբ գուղատնտեսական արտադրանքի արտադրության) կողմ, կամ՝

5) որոնց պատկանում է այլ անձանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսը և ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին), կամ

6) որոնց գործունեությունը (բացառությամբ՝ իր բնույթով պայմանավորված իրականացման մշտական վայր չունեցող գործունեության տեսակների) իրականացվում է մեկից ավելի վայրում, կամ՝

7) որոնք արտոնագրային վճար վճարող համարվելու համար հարկային տեսչություն դիմում-հայտարարություն ներկայացնելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հանդեպ ունեն 100 հազար և ավելի դրամը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ (այդ թվում՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարը):

4. Սույն օրենքի իմաստով վայր չի համարվում ֆիզիկական անձի գտնվելու և (կամ) կառավարման որոշումների ընդունման վայրերը, եթե դրանցում չեն իրականացվում սույն օրենքի հավելվածներով սահմանված գործունեության տեսակները:

Հոդված 5. Արտոնագրային վճար վճարող համարվելու համար դիմում-հայտարարություն ներկայացնելը և հաշվառվելը

1. Սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված պայմանները բավարարող անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք տվյալ տարվա որևէ ժամանակահատվածում (եռամսյակ, կիսամյակ, 9 ամիս, տարի) արտոնագրային վճար վճարող համարվելու համար իրենց հաշվառման (բնակության, գործունեության իրականացման) հարկային մարմին են ներկայացնում սույն օրենքի անբաժանելի մաս համարվող հավելված 3-ում սահմանված ձևով դիմում-հայտարարություն՝ տվյալ ժամանակահատվածի առաջին ամսվա ընթացքում, որտեղ պարտադիր նշվում են՝

1) արտոնագրային վճար վճարողի՝

ա. անունը և ազգանունը,

բ. անձնագրային տվյալները,

գ. սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում).

2) արտոնագրային վճարով հարկվող գործունեություն իրականացնելու ժամանակահատվածը.

3) գործունեության իրականացման՝

ա. տեսակը (տեսակները),

բ. վայրը (բացառությամբ՝ իր բնույթով պայմանավորված իրականացման մշտական վայր չունեցող գործունեության տեսակների):

2. Սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված պայմանները բավարարող անհատ ձեռնարկատերերը տվյալ տարվա որևէ ժամանակահատվածում (եռամսյակ, կիսամյակ, 9 ամիս, տարի) արտոնագրային վճար վճարող համարվելու համար իրենց հաշվառման հարկային մարմին են ներկայացնում սույն օրենքի անբաժանելի մաս համարվող հավելված 4-ում սահմանված ձևով դիմում-հայտարարություն՝ տվյալ ժամանակահատվածի առաջին ամսվա ընթացքում, որտեղ պարտադիր նշվում են՝

1) արտոնագրային վճար վճարողի՝

ա. անունը և ազգանունը,

բ. պետական գրանցման վկայականի համարը,

գ. ՀՎՀՀ-ը.

2) արտոնագրային վճարով հարկվող գործունեություն իրականացնելու ժամանակահատվածը,

3) գործունեության իրականացման՝

ա. տեսակը (տեսակները),

բ. վայրը (բացառությամբ՝ իր բնույթով պայմանավորված իրականացման մշտական վայր չունեցող գործունեության տեսակների):

3. Դիմում -հայտարարություն ներկայացրած անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձին տրվում է հարկ վճարողի հաշվառման համարը (այսուհետ՝ ՀՎՀՀ)՝ «Կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

4. ՀՎՀՀ տրամադրելու օրն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը հաշվառվում է հարկային մարմնում որպես արտոնագրային վճար վճարող և ստանում է սույն օրենքի անբաժանելի մաս համարվող հավելված 5-ում սահմանված ձևի արտոնագիրը:

5. Դիմում-հայտարարություն ներկայացնելու օրն անհատ ձեռնարկատերը հաշվառվում է հարկային մարմնում որպես արտոնագրային վճար վճարող և

ստանում է սույն օրենքի անբաժանելի մաս համարվող հավելված 6-ում սահմանված ձևի արտոնագիրը:

6. Յուրաքանչյուր ֆիզիկական անձին յուրաքանչյուր ժամանակահատվածի (եռամսյակ, կիսամյակ, 9 ամիս, տարի) համար տրվում է մեկ արտոնագիր:

7. Որևէ ժամանակահատվածի (եռամսյակ, կիսամյակ, 9 ամիս, տարի) համար արտոնագիր ստացած ֆիզիկական անձին այդ ժամանակահատվածը ամբողջությամբ կամ մասնակի ներառող ժամանակահատվածի համար նոր արտոնագիր (եռամսյակային, կիսամյակային, 9 ամսվա, տարեկան) չի տրամադրվում:

Հոդված 6. Արտոնագրային վճարի հարկման օբյեկտը և չափը

1. Արտոնագրային վճարի հարկման օբյեկտ են համարվում սույն օրենքի անբաժանելի մաս համարվող հավելված 1-ում և 2-ում ընդգրկված գործունեության տեսակները, որոնց իրականացման արդյունքում ֆիզիկական անձը ստացել է կամ նպատակ է ունեցել ստանալ եկամուտ:

2. Գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով արտոնագրային վճարի չափը սահմանվում է սույն օրենքի անբաժանելի մաս համարվող հավելված 1-ում և 2-ում սահմանված եռամսյակային չափերից ելնելով: Սույն օրենքի հավելված 2-ում սահմանված գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով արտոնագրային վճարի եռամսյակային չափերը որոշվում են մեկ միավորի արտոնագրային վճարի եռամսյակային դրույքաչափի և արտոնագրային վճարի հաշվարկման համար հիմք ընդունվող մեծության արտադրյալով:

3. Գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով արտոնագրային վճարի չափը սահմանվում է արտոնագրային վճարի եռամսյակային չափի և տվյալ գործունեության տեսակի համար տվյալ արտոնագրում նշված ժամանակահատվածում ներառված եռամսյակների թվի արտադրյալով՝ դրամական արտահայտությամբ:

4. Ընթացիկ տարում սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը գերազանցելու, ինչպես նաև սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կամ 3-րդ մասերով սահմանված պայմաններին չբավարարելու դեպքում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող արտոնագրային վճար վճարող ֆիզիկական անձինք՝

1) դադարում են համարվել արտոնագրային վճար վճարող և այդ պահից մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ը (ներառյալ) չեն կարող հանդիսանալ արտոնագրային վճար վճարող.

2) այդ պահից մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ը (ներառյալ) ընկած ժամանակահատվածի համար հարկերը հաշվարկում և վճարում են անհատ ձեռնարկատերերի համար օրենքով սահմանված ընդհանուր կարգով՝ այդ չափը գերազանցող մասով (բացառությամբ՝ հաշվեգրման եղանակով եկամուտների հաշվարկման և հարկային վնասների փոխանցման դրույթների):

5. Ընթացիկ տարում սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը գերազանցելու, ինչպես նաև սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կամ 3-րդ մասերով սահմանված պայմաններին չբավարարելու դեպքում արտոնագրային վճար վճարող անհատ ձեռնարկատերերը՝

1) դադարում են համարվել արտոնագրային վճար վճարող և այդ պահից մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ը (ներառյալ) չեն կարող հանդիսանալ արտոնագրային վճար վճարող.

2) այդ պահից մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ը (ներառյալ) ընկած ժամանակահատվածի համար հարկերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները հաշվարկում և վճարում են օրենքով սահմանված ընդհանուր կարգով՝ այդ չափը գերազանցող մասով:

6. Ընթացիկ տարում արտոնագրային վճար վճարող հանդիսանալուց դադարելու դեպքում սույն օրենքով սահմանված կարգով վճարված արտոնագրային վճարները չեն հաշվանցվում տվյալ տարվա եկամտահարկի և (կամ) ԱԱՀ-ի գումարներից և չեն վերադարձվում (անկախ նրանից, թե որ ժամանակահատվածի համար է վճարվել արտոնագրային վճարը), ինչպես նաև հաշվի չեն առնվում արտոնագրային վճար վճարող համարվելու ժամանակաշրջանում ձեռքբերումների գծով կատարված ծախսերը և վճարված (վճարվող) ԱԱՀ-ի գումարները:

Հոդված 7. Արտոնագրայ ին վճար վճարողների կողմից հաշվարկային փաստաթղթերի դուրսգրումը, այլ հարկերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների վճարումը

1. Արտոնագրային վճար վճարողները հարկային հաշիվներ դուրս չեն գրում:

2. Արտոնագրային վճար վճարողները չեն հանդիսանում հարկային գործակալներ՝ արտոնագրային վճար վճարողներից եկամուտներ ստացած ֆիզիկական անձանց վրա տարածվում են «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31.1-րդ հոդվածով սահմանված դրույթները:

3. Սույն օրենքով կարգավորվող հարաբերությունների մասով անհատ ձեռնարկատեր հանդիսացող արտոնագրային վճար վճարողների վրա՝ արտոնագրային վճար վճարելու ժամանակահատվածում ֆիզիկական անձանց եկամուտներ վճարվելու դեպքում, տարածվում են «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված դրույթները:

4. Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող արտոնագրային վճար վճարողների կողմից կազմակերպություններին, արտոնագրային վճար վճարող չհանդիսացող անհատ ձեռնարկատերերին և նոտարներին ծառայություններ մատուցելու դեպքում վերջիններս որպես՝

1) հարկային գործակալ եկամտի վճարման աղբյուրի մոտ եկամտահարկը պահում (գանձում) են «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդհանուր կարգով.

2) գործատու պարտադիր սոցիալական ապահովության վճարները կատարում են «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

5. Արտոնագրային վճար վճարելու ժամանակահատվածը համարվում է ապահովագրական ստաժ միայն վճարողի կողմից «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով անհատ ձեռնարկատերերի համար սահմանված ամսական նվազագույն պարտադիր սոցիալական ապահովության վճարները կատարելու դեպքում (հաշվի առնելով արտոնագրային վճար վճարելու ժամանակահատվածը), որը արտոնագիրը ստանալիս վճարողի կողմից կարող է վճարվել իր հայեցողությամբ և որը արտոնագրային վճար վճարելու ժամանակահատվածի համար հանդիսանում է

պարտադիր սոցիալական ապահովության վճարների պարտավորության վերջնական գումար:

6. Արտոնագրային վճար վճարողները այդպիսին համարվելու հաշվետու ժամանակաշրջանում սույն օրենքով կարգավորվող հարաբերությունների մասով չեն տարածվում «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածով սահմանված դրույթները:

7. Արտոնագրային վճար վճարողները հարկային մարմիններ օրենսդրությամբ սահմանված հաշվետվություններ (հաշվարկներ, հայտարարագրեր, տեղեկություններ) չեն ներկայացնում (բացառությամբ՝ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի):

Հոդված 8. Արտոնագրային վճարի վճարման կարգը և ժամկետները

Արտոնագրային վճար վճարողներն արտոնագրային վճարը, ինչպես նաև սույն օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասում նշված դեպքում պարտադիր սոցիալական ապահովության վճարները վճարում են արտոնագիրը ստանալուց:

Հոդված 9. Սույն օրենքի խախտման համար պատասխանատվությունը

1. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված պայմանը խախտելու դեպքում արտոնագրային վճար վճարողներն կրում են չգրանցված վարձու աշխատող պահելու դեպքում գործատուների համար օրենքով սահմանված պատասխանատվությունը:

2. Հայաստանի Հանրապետությունում հսկիչ-դրամարկղային մեքենաների պարտադիր կիրառմամբ գործունեություն իրականացնող արտոնավճար վճարող անհատ ձեռնարկատերերը հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման և հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնները չպահպանելու դեպքում կրում են օրենքով սահմանված պատասխանատվությունը:

3. Սույն օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված տեղեկությունները հարկային մարմիններ չներկայացնելու դեպքում արտոնագրային վճար վճարողները կրում են տեղեկությունները հարկային մարմիններ չներկայացնելու համար օրենքով սահմանված պատասխանատվությունը:

4. Արտոնագրային վճար վճարողի կողմից՝ տվյալ արտոնագրում չնշված և սույն օրենքի N1 և N2 հավելվածներում նշված գործունեության տեսակով (տեսակներով) զբաղվելու դեպքում արտոնագրային վճար վճարողից գանձվում է գործունեության այդ տեսակի (տեսակների) և ժամանակահատվածի համար սույն օրենքով սահմանված արտոնագրային վճարը՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով սահմանված կարգով և չափով հաշվարկված տույժերի հետ միասին:

5. Անհատ ձեռնարկատեր հանդիսացող արտոնագրային վճար վճարողի կողմից սույն օրենքի N1 և N2 հավելվածներում չնշված գործունեության տեսակով (տեսակներով) զբաղվելու փաստը հարկային մարմնի կողմից արձանագրվելու դեպքում այդ գործունեությամբ զբաղվելու պահից մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ը (ներառյալ) ընկած ժամանակահատվածի համար հարկերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները հաշվարկում և վճարում են օրենքով սահմանված ընդհանուր կարգով՝ հաշվի առնելով սույն օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դրույթները:

Հոդված 10. Օրենքի վերաբերյալ գերատեսչական նորմատիվ ակտերը

Սույն օրենքի կիրառման վերաբերյալ գերատեսչական նորմատիվ ակտերն ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունների հետ:

Հոդված 11. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-247-Ն օրենքը:

Հավելված N1
«Արտոնագրային վճարների մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի

ՑԱՆԿ
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂ ՀԱՄԱՐՎԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԻ

NN	Գործունեության տեսակները	Եռամսյակային արտոնագրային վճարի չափը՝ ըստ բնակավայրերի (հազ. դրամ)				
		ք. Երևան	մարզկենտրոններ	այլ քաղաքներ	հեռավոր և սահման ամերձ	այլ վայրեր
1.	Բնակչության պատվերով կատարվող՝	20,0	7,5	6,0	0,9	3,0
1.1	կոշիկի և կաշվե գալանտերեայի և համանման այլ արտադրատեսակների արտադրություն, կոշիկի և կաշվե արտադրատեսակների նորոգում					
1.2	հագուստի արտադրություն և նորոգում					
1.3	գլխարկների արտադրություն և նորոգում					
1.4	գորգերի և գորգագործական արտադրա-տեսակների արտադրություն և նորոգում					
1.5	փայտյա իրերի պատրաստում, կահույքի եւ տան կահավորանքի նորոգում					
1.6	ոչ թանկարժեք զարդերի արտադրություն եւ նորոգում					
1.7	համակարգչային տեխնիկայի նորոգում, ծրագրային սպասարկում					
1.8	հեծանիվների և հաշմանդամների սայլակների արտադրություն, անձնական օգտագործման և կենցաղային այլ արտադրատեսակների նորոգում					
1.9	տնտեսական և գեղազարդ խեցեգործական արտադրատեսակների արտադրություն					
1.10	այլ ճենապակե և խեցեգործական արտադրատեսակների արտադրություն					
2.	Ժամացույցների, ժամանակաչափ սարքերի նորոգում, երաժշտական գործիքների նորոգում	20,0	7,5	6,0	0,9	3,0
3.	Նեղ մասնագիտական գիտելիքների ձեռք բերման այլ դասընթացներ	20,0	7,5	6,0	0,9	3,0
4.	Լեզուների ուսուցման դասընթացներ	30,0	12,0	9,0	1,2	4,5
5.	Բարձրագույն և այլ հաստատություններ ընդունվելու համար նախապատրաստական դասընթացներ	45,0	15,0	12,0	1,8	6,0
6.	Պարեր, երգեցողություն դասավանդողների	20,0	7,5	6,0	0,9	3,0

	գործունեություն					
7.	Կատարողական արվեստի բնագավառում գործունեություն, կատարողական արվեստի բնագավառում օժանդակ գործունեություն	20,0	7,5	6,0	0,9	3,0
8.	Ստեղծագործական գործունեություն	20,0	7,5	6,0	0,9	3,0
9.	Խնջույքավարների գործունեություն	45,0	15,0	12,0	1,8	6,0
10.	Կրթական գործունեություն և արտադպրոցական դաստիարակություն մարմնամարզության և սպորտի բնագավառում	20,0	7,5	6,0	0,9	3,0
11.	Մասնավոր տնային տնտեսություններում ծառայությունների մատուցում (առանց տարբերակման) սեփական սպառման համար	20,0	7,5	6,0	0,9	3,0
12.	Դարբնոցային գործունեություն	20,0	7,5	6,0	0,9	3,0
13.	Զբոսաշրջային տների միջոցով հյուրանոցա-յին ծառայությունների մատուցում*	45,0	30,0	30,0	15,0	15,0

* Զբոսաշրջային տների միջոցով հյուրանոցային ծառայությունների մատուցման մասով արտոնագրային վճարի հաշվարկման համար հիմք է ընդունվում զբոսաշրջային տան սենյակների թվաքանակը:

Հավելված N2
«Արտոնագրային վճարների մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի

ՑԱՆԿ
ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂ ՀԱՄԱՐՎԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԻ

Գործունեության տեսակը	Արտոնագրային վճարի հաշվարկման համար հիմք ընդունվող մեծությունը	Արտոնագրային վճարի եռամսյակային դրույքաչափը 1 միավորի (հազար դրամ)				
		Երևան քաղաքում	մարզ-կենտրոն-ներում	այլ քաղաքներում և Երևանի քաղաքի վարչական սահմաններից մինչև 20կմ հեռավորության վրա գտնվող բնակավայրերում	այլ վայրերում	հեռավոր և սահմանամերձ բնակա-վայրերում
Առևտրի իրականացման վայրերից դուրս գտնվող՝ Երևան քաղաքում՝ 7մ^2, այլ վայ-րերում՝ 10մ^2 առևտրական տարածքը չգե-րազանցող կրպակի միջոցով առևտրական գործունեություն	կրպակի ընդհանուր տարածք, մ^2	5,0	2,5	2,0	2,0	1,0
Թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում*	x	20,5	18,75	17,5	17,5	17,5
Բիլիարդ խաղի կազմակերպում	խաղասեղան	120,0	60,0	60,0	60,0	60,0
Սեղանի թենիս խաղի կազմակերպում	խաղասեղան	40,0	20,0	20,0	20,0	20,0
Վարսավիրական ծառայությունների մատուցում	x	45,0	36,25	36,25	27,0	27,0
Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում և նորոգում	x	45,0	36,25	36,25	36,25	36,25
Համակարգչային խաղերի կազմակերպում	մոնիտոր	62,5	60,0	45,0	30,0	25,0

* Տարբեր բնակավայրերում թեթև մարդատար ավտոմեքենայով ուղևորափոխադրում իրականացնելու դեպքում կիրառվում է տվյալ բնակավայրի համար սահմանված արտոնագրային վճարի առավելագույն դրույքաչափը:

Հավելված N3
«Արտոնագրային վճարների մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի

ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (արտոնագրային վճար վճարող համարվելու համար)	Փաստաթղթի հերթական համարը՝ _____ (լրացվում է հարկային մարմնի կողմից)
Ֆիզիկական անձի անունը և ազգանունը	
Անձնագրի տվյալները (սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել)	
Սոցիալական քարտի համարը	
Գտնվելու (բնակության) վայրը	

Ցանկանում եմ իրականացնել գործունեության հետևյալ տեսակը (տեսակները)՝	Սկիզբը (ամիս)	Ավարտը (ամիս)	Գործունեության վայրը	Ստորագրությունը
1. Բնակչության պատվերով կատարվող՝				
1.1. կոշիկի և կաշվե գալանտերեայի և համանման այլ արտադրատեսակների արտադրություն, կոշիկի և կաշվե արտադրատեսակների նորոգում				
1.2. հագուստի արտադրություն և նորոգում				
1.3. գլխարկների արտադրություն և նորոգում				
1.4. գորգերի և գորգագործական արտադրատեսակների արտադրություն և նորոգում				
1.5. փայտյա իրերի պատրաստում, կահույքի եւ տան կահավորանքի նորոգում				
1.6. ոչ թանկարժեք զարդերի արտադրություն եւ նորոգում				
1.7. համակարգչային տեխնիկայի նորոգում, ծրագրային սպասարկում				
1.8. հեծանիվների և հաշմանդամների սայլակների արտադրություն, անձնական օգտագործման և կենցաղային այլ արտադրատեսակների նորոգում				
1.9. տնտեսական և գեղազարդ խեցեգործական արտադրատեսակների արտադրություն				
1.10. այլ ճենապակե և խեցեգործական արտադրատեսակների արտադրություն				
2. ժամացույցների, ժամանակաչափ սարքերի նորոգում, երաժշտական գործիքների նորոգում				
3. նեղ մասնագիտական գիտելիքների ձեռք բերման այլ դասընթացներ				
4. լեզուների ուսուցման դասընթացներ				
5. բարձրագույն և այլ հաստատություններ ընդունվելու համար նախապատրաստական դասընթացներ				
6. պարեր, երգեցողություն դասավանդողների գործունեություն				
7. կատարողական արվեստի բնագավառում գործունեություն, կատարողական արվեստի բնագավառում օժանդակ գործունեություն				
8. ստեղծագործական գործունեություն				
9. խնջույքավարների գործունեություն				
10. կրթական գործունեություն և արտադպրոցական դաստիարակություն մարմնամարզության և սպորտի բնագավառում				
11. մասնավոր տնային տնտեսություններում ծառայությունների մատուցում (առանց տարբերակման) սեփական սպառման համար				
12. դարբնոցային գործունեություն				

13. Զբոսաշրջային տների միջոցով հյուրանոցային ծառայությունների մատուցում				

Սույնով հայտարարում եմ, որ՝
1) նախորդ տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների (բացառությամբ՝ որպես վարձու աշխատող կատարող կատարած աշխատանքների), ինչպես նաև վարձավճարների իրացման շրջանառության ընդհանուր գումարը (առանց ԱԱՀ-ի) չի գերազանցել 6,0 մլն. դրամը.
2) գործունեության իրականացման համար չեմ օգտագործում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այլ ֆիզիկական անձանց աշխատանքը.
3) դիմում-հայտարարություն ներկայացնելու օրվան նախորդ և (կամ) ընթացիկ տարվա որևէ պահին չեմ իրականացրել Հայաստանի Հանրապետություն «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծում.
4) չեմ իրականացնում առևտրական գործունեություն Երևանում՝ 7 քառակուսի մետր, այլ վայրերում՝ 10 քառակուսի մետր առևտրական տարածքը գերազանցող կրպակում.
5) չեմ հանդիսանում համատեղ գործունեության պայմանագրի կողմ.
6) չեմ հանդիսանում ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրող, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակից, արտարժույթի առքուվաճառքի, արտարժույթի դիլերային առքուվաճառքի գործունեություն իրականացնող, խաղատների, շահումով խաղերի կամ վիճակախաղերի կազմակերպման գործունեություն իրականացնող.
7) ինձ չի պատկանում այլ անձանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսը և ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին).
8) գործունեությունը (բացառությամբ՝ իր բնույթով պայմանավորված իրականացման մշտական վայր չունեցող գործունեության տեսակների) չի իրականացվում մեկից ավելի վայրում.
9) դիմում-հայտարարություն ներկայացնելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հանդեպ չունեմ 100 հազար և ավելի դրամը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ (այդ թվում՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարը).

Դիմումատուի ստորագրությունը	Հարկային (տարածքային) տեսչության պետ՝ Տեսուչ՝

Դիմում-հայտարարության ներկայացման օրը
_____ _____ 20_____թ.

ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (արտոնագրային վճար վճարող համարվելու համար)	Փաստաթղթի հերթական համարը (լրացվում է հարկային մարմնի կողմից)
Անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը	
Պետական գրանցման վկայականի համարը	
ՀՎՀՀ	
Գտնվելու (բնակության) վայրը	

Ցանկանում եմ իրականացնել գործունեության հետևյալ տեսակը (տեսակները)՝	Սկիզբը (ամիս)	Ավարտը (ամիս)	Գործունեության վայրը	Ստորագրությունը

Սույնով հայտարարում եմ, որ՝
1) նախորդ տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների (բացառությամբ՝ որպես վարձու աշխատող կատարող կատարած աշխատանքների), ինչպես նաև վարձավճարների իրացման շրջանառության ընդհանուր գումարը (առանց ԱԱՀ-ի) չի գերազանցել 6,0 մլն. դրամը.
2) գործունեության իրականացման համար չեմ օգտագործում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այլ ֆիզիկական անձանց աշխատանքը.
3) դիմում-հայտարարություն ներկայացնելու օրվան նախորդ և (կամ) ընթացիկ տարվա որևէ պահին չեմ իրականացրել Հայաստանի Հանրապետություն «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծում.
4) չեմ իրականացնում առևտրական գործունեություն Երևանում՝ 7 քառակուսի մետր, այլ վայրերում՝ 10 քառակուսի մետր առևտրական տարածքը գերազանցող կրպակում.
5) չեմ հանդիսանում համատեղ գործունեության պայմանագրի կողմ.
6) չեմ հանդիսանում ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրող, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակից, արտարժույթի առքուվաճառքի, արտարժույթի դիլերային առքուվաճառքի գործունեություն իրականացնող, խաղատների, շահումով խաղերի կամ վիճակախաղերի կազմակերպման գործունեություն իրականացնող.
7) ինձ չի պատկանում այլ անձանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսը և ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին).
8) գործունեությունը (բացառությամբ՝ իր բնույթով պայմանավորված իրականացման մշտական վայր չունեցող գործունեության տեսակների) չի իրականացվում մեկից ավելի վայրում.
9) դիմում-հայտարարություն ներկայացնելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հանդեպ չունեմ 100 հազար և ավելի դրամը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ (այդ թվում՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարը).

Դիմումատուի ստորագրությունը	Հարկային (տարածքային) տեսչության պետ՝ Տեսուչ՝

Դիմում-հայտարարության ներկայացման օրը
_____ _____ 20___թ.

Հավելված N5
«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Ա Ր Տ Ո Ն Ս Ա Գ Ի Ր N _____

___ _____ 20___թ.

Սույն արտոնագիրը տրվում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձին _____
_____ հաշվառված _____ _____ 20___թ. ՀՎՀՀ _____ և հավաստում է այն մասին, որ նա 20___թ. ընթացքում հանդիսանում է արտոնագրային վճար վճարող

Գործունեության տեսակները	Սկիզբը (ամիս)	Ավարտը (ամիս)	Գործուն. վայրը
1. Բնակչության պատվերով կատարվող՝			
1.1. կոշիկի և կաշվե գալանտերեայի և համանման այլ արտադրատեսակների արտադրություն, կոշիկի և կաշվե արտադրատեսակների նորոգում			
1.2. հագուստի արտադրություն և նորոգում			
1.3. գլխարկների արտադրություն և նորոգում			
1.4. գորգերի և գորգագործական արտադրատեսակների արտադրություն և նորոգում			
1.5. փայտյա իրերի պատրաստում, կահույքի եւ տան կահավորանքի նորոգում			
1.6. ոչ թանկարժեք զարդերի արտադրություն եւ նորոգում			
1.7. համակարգչային տեխնիկայի նորոգում, ծրագրային սպասարկում			
1.8. հեծանիվների և հաշմանդամների սայլակների արտադրություն, անձնական օգտագործման և կենցաղային այլ արտադրատեսակների նորոգում			
1.9. տնտեսական և գեղազարդ խեցեգործական արտադրատեսակների արտադրություն			
1.10. այլ ճենապակե և խեցեգործական արտադրատեսակների արտադրություն			
2. ժամացույցների, ժամանակաչափ սարքերի նորոգում, երաժշտական գործիքների նորոգում			
3. նեղ մասնագիտական գիտելիքների ձեռք բերման այլ դասընթացներ			
4. լեզուների ուսուցման դասընթացներ			
5. բարձրագույն և այլ հաստատություններ ընդունվելու համար նախապատրաստական դասընթացներ			
6. պարեր, երգեցողություն դասավանդողների գործունեություն			
7. կատարողական արվեստի բնագավառում գործունեություն, կատարողական արվեստի բնագավառում օժանդակ գործունեություն			
8. ստեղծագործական գործունեություն			
9. խնջույքավարների գործունեություն			
10. կրթական գործունեություն և արտադպրոցական դաստիարակություն մարմնամարզության և սպորտի բնագավառում			
11. մասնավոր տնային տնտեսություններում ծառայությունների մատուցում (առանց տարբերակման) սեփական սպառման համար			
12. դարբնոցային գործունեություն			
13. Զբոսաշրջային տների միջոցով հյուրանոցային ծառայությունների մատուցում			

Հարկային (տարածքային) տեսչության պետ
_____
(անունը, ազգանունը)

_____
(ստորագրությունը)

Կ.Տ.

Հավելված N6
«Արտոնագրային վճարների մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Ա Ր Տ Ո Ն Ա Գ Ի Ր N _____

_____ _____ 20___թ.

Սույն արտոնագիրը տրվում է անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձին

_____

_____ հաշվառված _____ _____ 20___թ. ՀՎՀՀ _____ և

հավաստում է այն մասին, որ նա 20___թ. ընթացքում հանդիսանում է արտոնագրային վճար վճարող

Գործունեության տեսակները	Սկիզբը (ամիս)	Ավարտը (ամիս)	Գործուն. վայրը

Հարկային (տարածքային) տեսչության պետ _____

(անունը, ազգանունը)

_____

(ստորագրությունը)

Կ.Տ.

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առաջարկության, առարկության հեղինակը (առաջարկության, առարկության ստացման ամսաթիվը)	Առաջարկության, առարկության բովանդակությունը	Եզրակացություն
ՀՀ կառավարություն	Ներկայացված փոփոխությունները չի կարելի համարել ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 21-ի թիվ 97 որոշման հավելվածով հաստատված միջոցառումների ծրագրի 1.1.1 և 1.1.2 կետերի իրականացում, քանի որ տվյալ փոփոխություններն ազդում են տնտեսվարողների փոքր հատվածի գործունեության վրա, էականորեն չեն նվազեցնում և չեն միասնականացնում տնտեսվարողների կողմից հարկային մարմին ներկայացվող հաշվետվությունները: Ներկայացված փաթեթը չի պարունակում բարձրացված խնդրի ամբողջական լուծում:	Ներկայացված դիտողության հետ համաձայն չենք, քանի որ մշակված օրենսդրական փոփոխությունների փաթեթով՝ • Կրճատվում է ներկայացվող հաշվետվությունների քանակը հարկային մարմինների կողմից վարչարարվող հարկատեսակների և պարտադիր վճարների մեծամասնության գծով, այդ թվում՝ ԱԱՀ-ի, ակցիզային հարկի, ոչ ռեզիդենտների շահութահարկի, հաստատագրված վճարների, բնապահպանական և բնօգտագործման վճարների, ճանապարհային վճար, հանրային ծառայությունների կարգավորման և այլ պարտադիր վճարների: • Նախնական գնահատմամբ՝ միայն արտոնագրային վճարների մասին նոր օրենսդրական փաթեթի հետևանքով մոտ 15 ԱՁ-ների համար արտոնագրային վճարներով հարկման ռեժիմին անցնելու եղանակով կտրուկ դյուրացվում է նրանց հաշվետվական ռեժիմը: • Օրենսդրական փաթեթով հիմքեր են ապահովվում հարկային հաշվետվությունների հետագա ավտոմատացման համար, միասնականացվում են բոլոր հարկային հաշվետվությունների ներկայացման վերջնաժամկետները: • ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ստեղծվող աշխատանքային խմբի առջև դրված խնդիրը կապված է ՀՀ կառավարության 21.01.2010 թիվ 97 որոշման հավելվածով հաստատված միջոցառումների ծրագրի 1.1.4 կետի իրականացման հետ և վերաբերվում է ընդհանրապես պետական մարմիններին ներկայացվող փաստաթղթերի նվազեցմանը: Իսկ սույն օրենսդրական փաթեթը մշակված է ի կատարումն վերոնշյալ որոշման 1.1.1 և 1.1.2 կետերի, որոնք վերաբերվում են միայն հարկային հաշվետվությունների օպտիմալացման խնդրին:
ՀՀ կառավարություն	Դիտողություններ և առաջարկություններ չկան	-

ՀՀ կառավարություն	՝Արտոնագրային վճարների մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի և 5-րդ մասի 2-րդ կետի կապակցությամբ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի և ՝Իրավական ակտերի մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների համաձայն՝ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վճարվող հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների տեսակները, չափը, վճարման կարգը:	Ընդունվել է:
	Օրենքի նախագիծ 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի և ՝Իրավական ակտերի մասին՝ ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների համաձայն՝ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց պատասխանատվության տեսակները, չափերը, պատասխանատվության ենթարկելու կարգը:	Ընդունվել է:
«Բարգավաճ Հայաստան» խմբակցություն	Առաջարկվում է ֆիզիկական անձանց կողմից արտոնագրային վճար վճարող համարվելու գործունեության տեսակների ցանկը լրացնել գործունեության հետեւյալ տեսակներով. 1) փայտյա իրերի պատրաստում, կահույքի վերանորոգում, 2) զարդերի արտադրություն եւ վերանորոգում, 3) փաստաբանական ծառայություն եւ այլ վճարովի ներկայացուցչական գործունեություն, 4) հրավառությունների կազմակերպիչներ, խնջույքավարներ, համակարգչային տեխնիկայի եւ ծրագրերի սպասարկում իրականացնողներ	Ընդունվել է մասնակի: ֆիզիկական անձանց կողմից արտոնագրային վճար վճարող համարվելու գործունեության տեսակների ցանկը լրացվել է գործունեության հետեւյալ տեսակներով. 1) փայտյա իրերի պատրաստում, կահույքի եւ տան կահավորանքի նորոգում, 2) ոչ թանկարժեք զարդերի արտադրություն եւ նորոգում, 3) խնջույքավարների գործունեություն, 4) համակարգչային տեխնիկայի նորոգում, ծրագրային սպասարկում